

## ԳԼՈՒԽ ԺԵ

Չորս տարի կը, որ Հայաստան թշուառութեան մէջ կը հեծեր: Մեռեալները կը թաղուէին, զիրենք ծածկող հողը թէւ մոռացութեան թանձր վարագոյր չէր սիրելեաց սրտին համար, բայց երբ գերելոց հետ բաղդատուէին նոքա՝ ամեն հայ մարդ՝ «Երանի մեռելոց որ ի տեր ննջեցին» կ'ըսէր: Այն ատենուան ամենայն դասակարգի մարդկանց մէջ այսօրուան զօրաւոր գլուխները չէին ստեղծուած որ գորտերու սաղմի սերունդ համարէին մարդկութիւնը. եւ հայ ազգը, որ գերդաստանի սերը, նահապետական կեանքը միշտ պահած էր, իւր զաւակներուն վրայ կ'ողբար, որ շղթայակապ արաբական ճիւղին առջեւէն կենդանեաց նախիրներու հետ եւ պէսկը թողուին հայրենի երկիրը երթալու ծառայութեան, ուրացութեան եւ պղծութեանս մատնուելով:

Առաջին դերին երէն էին Գրիգոր եւ Սուրէն, զօրս մենք թողինք Դամասկոսի մօտ Շէյխ Ալիի պալատին մէջ: Ամառանոց մ'եր այդ գեղեցիկ պալատը՝ բնակարան երբեմն բիւզանդացի յոյն հարուստ իշխանաւորի, որ իր տկարութենէն տաք կլիմային դիմել պարտաւորեալ՝ ամենայն վայելչութեամբ զարդարած էր զայն: Ընդարձակ պարիսպ մը պտղատու ծառերու պարտեզ մը կը շրջապատէր, որու մէջտեղ քառակուսի բնակարան էր հաստատեալ հովանոցներով, եւ որ ներքին ծաղկոց մը ուներ եւ շատրուան: Այդ ներքին պարտեզին չորս կողմն էին սենեակները՝ իրենց դռներով եւ պատուհաններով: Եւ այդ քառանկիւն պարտեզին ներքին կողմն կանանոցին դուռն էր: Միայարկ էր տունն եւ Լիբանանու մայրեօք շինեալ. բայց կիսամերկ եւ բոկոտն արաբացին, որ նոր ելած էր իր աւազներուն մէջէն՝ դեռ չէր սովոր շինել՝ այլ քանդել միայն, ուստի շէնքն անխնամ առանց նորոգութեան սկսէր էր ապականիլ: Տան դռան մուտքին մէջ քանի մը շղթայաւորեալ քրիստոնեայ դերիք իրենց բնակութիւնն ունէին, առաջ շատ էին, տասը-տասներկու կը լինէին, բայց մահը, կրօնափոխութեամբ ազատութիւնը, չորս տարուան մէջ իրենց թիւք երեքի իջուցեր էր. Գրիգոր, Սուրէն եւ Գագրիկ անուամբ հայ շինական մի կային:— Առաջին երկու տարին Սուրէն ժամեժամ կը սպասէր ազատութեան, միշտ յուսալով թէ Մամիկոնեանք եւ Կ'ամսարականք իրենց փրկանաց գինը վճարելով՝ զիրենք կ'ազատեն այդ անտանելի գերութենէն, եւ այս բանիս համար քանի մը նամակներ յուղարկած էր Մուշեղ Մամիկոնեանի եւ Հրահատ Կամսարականի իւր եղբօր, բայց անօգուտ ելնելով իւր ակնկալութիւնը, միտքը փոխեց՝ ամերեսս ուրացութիւն յանձն առնուլ որոշելով, սկսաւ յորդորել զգրիգոր, որ վայրկենի մը համար յանձն առնուն այդ անօրինութիւնը: Այնպիսի դիմադրութիւն մը գտաւ եւ այնպիսի խիստ